ՍՈՓԵՐՔ

ՀԱՑԿԱԿԱՆՔ

Թ.

ՇՈՒՇԱՆԻԿ

ՎԿԱՅԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ԵՈՒԵՎԱՆԿԱՆ

ԴՍՏԵՐ

ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱՆԱՑ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Տպարանի Մխիթարեանց

ՌՃԾ — 1853

Ա. Զ Դ

Զհետ Սանդխատոյ՝ յոյժ վայելուչ զՇուշանկանն կարգել վկայաբանութիւն. զի երկոքին սոքա 'ի հայաստան կանանց զարմէ՝ հռչակափայլ պանծան յեկեղեցւոջ մեր ում, երկոքին սիրալիք, երկոքին սիրելիք 'ի Քրիստոս. բայց ոչքան Արշակունւոյ դստերն վարք եւ վէպք՝ կուսականաւ և մանկականաւ իմն փայլեն պարզութեամբ գեղեցիկք և հանդարտք, թէպէտ և աւելեամբ իսկ թաթաւեալ անբիծ նորայն ծոց. Մամիկոնուհոյս այնքան սրտառուչք և խորագդուք, ըստ կարգի առնակին և մայրենի վիճակին, թէ և ոչ աւելեամբ կնքեալ սո-

բա եւ էք , սակայն և ոչ ինչ ընդհատ.
ըստ բարւոյ պատահմանն կրկին ա.
նուանցն՝ շուշան արդարեւ անա.
բասուութեամբ և վարդ խոտոտանս.
զական կրկնքն և վերացն ցնցղաձեւ
ցայտմանց ։ Կին՝ որոնց Մամիկո.
նեան և հաւատովք պարթեւ , այս.
քան եղերական հանդիպեցեալ ժուժ.
կալեալ և 'ի նմին անենահանջելի կա.
մաք կատարեալ , վաղու արդեաք վա.
ռեալ էր զսիրտ և զհոգի և զաշ
խոյժ բանասիրաց օտարաց , եթէ
եկեալ էր նոցա 'ի ծանօթութիւն ,
ընդ Պոլսոքաեայ և ընդ նմանեսն՝ 'ի
թատերս իակ արբազանեց ողբեր.
գութեանց յիշատակիլ . իակ մեք և
'ի կատարեալ գիտութենէ և յան.
թերցուածոյ վարուց սորա վրն.
պեալ մեայոք ցարդ , մինչեւ գեռ
'ի հերուն յաջողեաց մեզ գտանել
զերկոսին եւս զվարքս արբոյս , զհա.
կիրճն յարեւելից , և զբուն զեր.

կային յարեւմտից՝ յերկաթագիր
մատեանէ. զոր և փութամբ ահա
տալ ՝ի լոյս, ակն ունելով ընդ
վայելից ընթերցասիրացն՝ և զաճ-
ման փառաց Վարդանանցին ծաղկին
Շուշանիկան. յորս զուարճացեալ
պարծեսցի համօրէն տուն և տա-
ճար Թորգոմայ, ՝ի Հայրն Կարմիր
և ՝ի Դուռատն Սպիտակաձգի։

ՎԿԱՑՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՑ ՀՈՒՀԱՆԿԱՆՆ

ՈՐ ԿԱՏԱՐԵՑԱՒ Ի ՎԻՐՍ

ՑԱՌՆԷ ԻՒՐՄԷ ՑԱՆԹԻՊԱՏՐԷ 1

ՎՐԱՑ ԱՌԱՔՆՈՐԴԷ

ՈՐ ԷՐ ԴՈՒՍՏՐ ՍՐԲՈՑՆ ՎԱՐԴԱՆԱՑ

ԵՒ ԹՈՌՆ ՍԱՀԱԿԱՆՈՒՀԱՑ

ԴՍՏԵՐ ՍՐԲՈՑՆ ՍԱՀԱԿԱՑ ՊԱՐԹԵՒ

ՀԱՑՈՑ ՀԱՑՐԱՊԵՏԻ

Եւ եղեւ 'ի ժամանակս Պարսից թագաւորութեանն՝ բդեաշխ Վասգեն, որդի Աշուշայ բդեշխի, որ 'ի գուռն արքունի երթեալ՝ ուրացաւ զքրիստոնէութիւն, և եղեալ ընդ պարսկական օրինաքն 'ի կամաց և ոչ 'ի հարկէ և 'ի բռնութենէ։ Եւ կին ունէր զգուսար Վարդանայ Հայոց սպարապետի Մամիկոնէի, թոռն որբոյն Սահակայ Պարթեւի և Հայոց հայրապետի՝ 'ի դատերէն Սահականուշայ, և անուն նորա Վարդենի 'ի ծնօղացն կոչեցեալ, և Շուշանիկ յորջորջանաք յետոյ անուանեալ։ բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ 'ի մանկութենէ իւրմէ։ Եւ վասն լկաի և անառակ վարուց առնն՝ աղաչէր զՀաւատացեալսն աղօթս առնել առ Աստուած, զի թերեւս գայցէ 'ի ըզ-

գաստուԹիւն. և հոգայր և կասկա-
ծէր յորժամ 'ի գուռն արքունի
չոգաւ՝ ԹէՀ ուրանայ զՔրիստոս։

Զոր և արար իսկ ամպարիշտն.
ուրանալով զՃշմարիտն Աստուած,
և երկրպագէր կրակի, և ուխտէր
ընդ սատանայ, և խնդրէր կին
պարսիկ 'ի Թագաւորէն։ Եւ հա-
ւատայր նմա և տայր զկնոջ իւրոյ
մայրն նմա 'ի կնուԹեան. և յանձն
առնէր՝ զկինն առաջին և զորդիսն
դարձուցանէր 'ի մոգուԹեան օրէնս։
Եւ ամպարշտուԹեամբ դառնայր
յաշխարհ իւր, և յղէր յառաջա-
գոյն յաշխարհ իւր զգալուստ իւր
և զդառնալն։

Եւ էկեալ ոմն առաջի տիկնոջն
Շուշանկանն՝ տալ զողջոյն զառնէն
իւրմէ. և նա ասէ, ԹէՀ Արդարեւ
ողջ լցէ հոգւով. երդմնեցուցանէր
զայրն յԱստուած կենդանի։ Եւ
ասէր արտասուօք. Այրն քո ու-
րացաւ զՃշմարտուԹիւնն և երկիր
եպագ ատրուշանաց 2, և եղեւ ընդ
պարսկական օրինաքն։ Եւ տիկինն
յերկիր կործանեցաւ. լայր դառ-

նապէս և եղուկ զայրն զուրացեալ յԱստուծոյ ասէր, և աւաղ զորդիսն վարկանէր։ Եւ յետ բազում ողբոց և հառաչանաց յարուցեալ երթայր յեկեղեցին, և զորդիսն իւր ընդ իւր տանէր, զի էին նորա երեք որդիք և դուստր մի. և անկանէր առաջի սրբոյ սեղանոյն և ասէր այսպէս. Տէր Աստուած ամենակալ արարող երկնի և երկրի, և որ 'ի նոսա արարածք իցեն. դու սահմանեցեր այնպիսի օրէնս ազատութեան միածնիւդ քո Որդւովդ, օրհնութեամբ բանիւդ քո 'ի ձեռն ծառայից քոց արքանեկաց, դրոշմեալս կենսաբեր աւետարանաւն, նոր և վերստին ծննդեամբ ջրով և Հոգւով, որդիս լուսոյ և որդիս տունջեան լինել և անուանել. և մաքրիլ 'ի գիշերային և յախտաւոր ծննդենէ՝ որ ըստ մարմնոյ յառն և 'ի կնոջէ յառաջ գան, և այցելութիւն գտանել 'ի լուսաւոր ծննդենէն որ 'ի Քրիստոս Յիսուս, և լինել մի հօտ միոյ հովուի Ճշմարտի Յիսուսի Քրիստոսի։ Եւ արդ ես

իմ ինչ ոչ համարիմ զսուտս՝ ըզ-
ծնեալս յառնել ամպարշաւ ըստ
մարմնոյ, մահկանացուս 'ի մահկա-
նացուէ. և ոչ ասել ինձ. Տէր,
եթէ արժանիս համարիս զսուտս
մնալ 'ի Աշմարիս և 'ի վերատին ծը-
նընդեանդ՝ 'ի Հայրն և յՈրդի և 'ի Հո-
գին սուրբ, և մնալ յարդարու-
թիւն 'ի վերայ բազկաց իմոց առա-
ջի քոյոյ տէրութեանդ. պահեա
զսուտս Աշմարտութեամբ 'ի հաւատս
ուղիղս և 'ի գործս բարիս, ըզ-
գաստութեամբ և արդարութեամբ
և ստուգապաշտութեամբ կեալ
յերկրի, և ոչ պաշտել զարարածս,
այլ զարարիչդ, որ ես օրհնեալ
յաւիտեանս. ամէն։ Զի գիմեալ
գայ ուրացեալն և լի ամպարշաւու-
թեամբ որսալ զիս և զծնունդս իմ
'ի վիհս կորստեան։ Եւ արդ տէր
Յիսուս Քրիստոս քեզ յանձն առ-
նեմ զիս և զորդիս իմ, որ տէրդ ես
և Աստուած. և պատրաստ եմ ես
չարչարել և մեռանել վասն անուանդ
քո սրբոյ, և ոչ հաւատարել կամաց
ուրացողին և պիղծ անկողնակցին։

Զի գոհ ես Աստուած Հշմարիտ և քեզ վայել է երկրպագութիւն և փառք յաւիտեանս . ամէն :

Եւ բազում պաղատանս ամենաուեառնն մատուցանէր արտասուօք երանելին յայդուէ մինչեւ ցերեկոյ յեկեղեցւոջն : Եւ կատարեցին ըզպաշտօն երեկոյին՝ ուխտ եկեղեցւոյն . և ամենեքին սգակից ելնէին , և ակն ածէին խօսել բան վասն այնորիկ : Եւ նա յարուցեալ մատնէր 'ի անիկ մի փոքրիկ , որ մերձ էր յեկեղեցին . և կայր յաղօթս առ Աստուած լալով և ողբալով զգիշերն ամենայն անհանգիստ , ամենեւին ոչ ինչ Հաշակեալ 'ի գառնութենէ անձին իւրոյ , և ոչ իշխէր համարձակ խօսել բան 'ի մերձաւորացն :

Եւ եպիսկոպոսն ոչ պատահէր 'ի ժամուն յայնմիկ 'ի տանն բգեշխին . բայց երէց գրան տիկնոջն համարձակեալ ափոփել զոտիկին վասն անհնարին վտանգիցն , ասէր ցերանելին . Ցիշեա զԱստուած , և նովին յուսովն զքեզ միխիթարեա , որ

տայ երկայնմտութիւն տարակուսելոց, և կեանս այնոցիկ որ մաշեալ են սրտիւք։ Անձամբ զանձնդ սփոփեա 'ի Քրիստոս. և մարտիր զբարիոք մարտն՝ որով կեաս և հանդիսանաս. և միխիթարութեամբ զանցաւորս թողուլ, և յուսոյն մերձենալ առ Աստուած, որ կարողն է յամենայնի, թէպէտ և ոչ զոք ունիս համաշունչ եթէ ընտանեբար հոգայցէ վասն քո։ Եւ այլովք բանիւք բազմօք քաջալերէր և միխիթարէր զնա։

Եւ մերձաւորացն ընդ նա համարձակեալ՝ առնուլ կերակուր, և ունկնդիր եղեալ սակաւ ինչ ճաշակեալ կերակուր և ըմպելի. և յարուցեալ գոհանայր զտեառնէ, և զգիշերն ամենայն յաղօթս և 'ի սաղմոսերգութիւնս և յընթերցումն գրոց անցուցանէին։ Եւ փոքր ինչ մրրկեալ սիրան և տարակուսեալ և խռովեալ՝ կազդուրէր յուսոյն Աստուծոյ։ Եւ 'ի կատարել զտառաւօտին պաշտօնն տային օրհնութիւն Աստուծոյ։

Եւ մատուցեալ քահանայն դը-
րանն ասէ ցոխկինն. Զի՞նչ եդիր 'ի
մոխ և զի՞նչ ունիս առնել, որ յա-
րուցեալ 'ի վերայ քո պատերազմ
յուրացողէն, յաղագս միաւորու-
թեանն իւրոյ վասն դատերն որ ըստ
Պարսկաց օրինին հանդերձեալ էր
առնուլ իւր 'ի կնութիւն. և յա-
ղագս որդւոցն դարձուցանելոյ
յԱստուծոյ ճշմարտէ, և առնել որ-
դիս խաւարի որպէս զինքն. և յա-
ղագս ամենայն չարեացն զոր հան-
դերձեալ էր ցուցանել ըստ խրա-
տու մոգուցն և ազգման չարին. ա-
տել զարդարութիւն և սիրել զա-
նօրէնութիւն և զամպարշտութիւն.
զի յամենայնի կատարեսցէ զմեղս:
Եւ պատասխանի կինն և ասէ. Այ-
սոքիկ վտանգեն 3 զիմ անձս, ուս-
տերաց և դատերաց իմոց տարա-
կուսանք և հոգք. զի գիտեմ զառնն
զամպարշտութիւնն, և վասն այնո-
րիկ յերկարեմ զսուգն, և ցտիմ
արտասուք. և ո՞վ տայր գլխոյ իմոյ
ջուր և աչաց իմոց աղբեւրս արտա-
սուաց, և յանապատի օթեվանս,

որ լայն յաղագս վերայ և անբժշկելոյ առն իմոյ ամենաբշխի և ուրացողի զԱստուած Ճշմարիտ. և վասն ծնեղոց իմոց տարակուսանաց, այլ յայլմէ երեւմանց լեալ, յաստուածգիտութենէ յանաստուածգիտութիւն, 'ի լուսոյ 'ի խաւար փոխադրեալ։ Ո՞վ ոչ ողբասցի զայսքան կորստեան համբաւս որ լսի. որ լսելիք բերեն զլուր կորստեան, որ ոչ ունի մատն մխիթարութեան. որ տեսանելիք տարցին զտեսութիւն առն ամենաբշխի և ուրացողի զԱստուած. որ քան ունիցի զայսքան աղէտից պատմել զթշուառութիւնս և զվտանգս. որ համբաւ մահու, որ այսպէս զհոգի և զմարմին կորուսանէ 'ի գեհենի. որ մեռեալ որ ոչ թողու մատն մխիթարութեան մերձաւորաց իւրոց յերկրի։ Որովք այսոքիւք մերժեցից զտուգ և սակաւ մի մխիթարեսցի անձն իմ. որքան է վտանգս, այլ 'ի վերայ այլոց զառաւելութիւն հեծութեան իմոնալ. ով հանճարեղ և իմաստուն, և իմաստի զուծումն գտա-

նել պատահեցելոյս . ոչ մարդիկ
ասացէք ։ Ընդէր , Տէր , կացէր 'ի
հեռատանէ և անտես արարէր զա-
զախին քո 'ի գէպ նեղութեանս և
տարակուսանացս և վասանգաւոր
ժամանակիս . զի ոչ այլ ուստէք է
մխիթարութիւն բայց յԱստուծոյ ։
Ոչ վերակացուք , ոչ մերձաւորք ,
ոչ սիրելիք , ոչ ծառայք , ոչ ազատ-
նեայք , ոչ օտարք , ոչ պանդուխտք ,
ոչ հեռաւորք , ոչ մօտաւորք , և ոչ
ոք յերկրաւորացս ։ Կորեա՜ հա-
ւատ . հատուս ապառեցաւ ամենայն
յոյս յերկրէ և 'ի մարդկանէ . բայց
ակն կալայց Աստուծոյ ամենակալն
որ փրկէ զիս . և տայցէ ինձ թեւս
որպէս արաւնոյ , զի թռուցեալ
թեւօք հոգւոյն սրբոյ շնորհօք՝ հա-
սանել և գագարել յանեապատն , և
ընդունել զօրութիւն 'ի վերին խնա-
մոցն , և սթափել փոքր ինչ 'ի մրրը-
կեալ սրանեղութենէս և 'ի վհա-
տութենէս ։ Եւ որպէս ինքն գիտէ
իւրով խմաստութեամբն և մարդա-
սիրութեամբն , և էս պատրաստ
եմ՝ տալ զանձնս բանգիս և կապա-

նաց և ամենայն կոտանաց, որով նեղէ զիս ուրացողն. զի Աստուծով կեցից և մեռայց վասն անուան նո՝ ցա, և ոչ թողից զաւանդութիւն հարցն իմոց Լուսաւորչացն Հայոց. և ոչ գրգռեցայց յընդդիմակացաց իմոց, որք զինին ընդդէմ անձին ի՝ մոյ, և ճշմարտութեան աւանդից որ 'ի Հայր և յՈրդի և սուրբ Հո՝ գին, խոստովանութիւն և երկրպա՝ գութիւն և փառաբանութիւն. ան՝ շարժ և անդրդուելի և հաստատուն կացից զօրութեամբ և շնորհիւ տեառն. և ընդ ուրացողին ոչ միա՝ ւորեցայց և պղծեցայց։ Եւ վարուց սրբութեան և արդարութեան պատ՝ կառ և հպատակ համբերութեամբ բազմաւ 'ի փառս և 'ի գովեստ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն և 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն։

Եւ այլովք բանիւք բազմօք աւա՝ ղէր ողորմ ողորմ զծնունդս որո՝ վայնի իւրոյ, և զվայրենութիւն առնն ամպարշտի, որ գիմեալ գայր

յարուցանել պատերազմ ընդդէմ ճշմարտութեան, և դնել որոգայթս և որսալ 'ի կորստեան վիհն մեղաց ուրացութեամբ և պղծութեամբ՝ զուստերս և զդստերս ըստ պարսկական օրինացն։ Եւ զինքն յուսոմէն Աստուծոյ մխիթարէր, զմտաւածէր որ 'ի սաղմոսերգութեանն պատմի. Ոչ կամէր մխիթարել անձն իմ, յիշեցի զԱստուած և ուրախ եղէ։ Եւ այսպէս քաջալերեալ զինքն և առժամայն զարամութիւնն յուրախութիւն փոխարկեաց. ՅԱստուած ապաստան առնէր զամենայն։

Յայնժամ գայր բդեաշխն ուրացեալ յաշխարհն Վրաց 'ի տուն իւր. և կոչեաց զեպիսկոպոսն իւր և զքահանայսն, խօսէր ընդ նոսա ողբանօք և պարգեւս խոստանայր, և առաւել քան զառաջինն ունել 'ի բարիոջ. Մի խորշիք, և մի խղձէք յիմ աէրութենէս, ասէր։ Եւ յղէր պատգամս առ ամիրայն, դառնալ յիւրոց կամացն և հաւանել կամաց նորա, և վայելել 'ի

փառս աշխարհիս առաւել քան զառաջինն։ Եւ նոքա եկեալ և եղ-
բայր բգեշխին ընդ նոսա, որում անուն էր Ջոջիկ. և յարտասուս
եղեալ ամենեքեան ակն ածէին ա-
սել զպատգամս ուրացողին. և յետ
բազում ողբոց և հառաչանաց, ուր
ուրեմն սկսաւ ասել եպիսկոպոսն և
Ջոջիկն զասացեալսն 'ի բգեշխէն։

Եւ նա ասէ ցեպիսկոպոսն խըս-
տագոյն բանիւք. Եւ դո՞ւ զայդ
հրամայես միաբանել ընդ առն ամ-
բարշտի և ուրացողի զԱստուած. և
այսպիսեացս լինիս թեղագիր և մը-
տախաբ. աւա՜ղ իմոյ թշուառու-
թեանս, որ յորդորիչ լինձ ոչ
գտաւ։ Ծանիք զնենգութիւն ամ-
պարշտին որ ձեւք խարդախէ զիս 'ի
կորստեան վիհն. մի ընդունիք զնո-
ցայն որ որսայ խաբէութեամբ.
բայց ես ոչ խաբիմ իմաստու-
թեամբն առաջնորդեալ լինձ յար-
դարութիւն։ Լուր առաքելական
խրատուն՝ որ զմարգարէական բանան
յիշեցուցանէ. Ելէք 'ի միջոյ նոցա
և մեկնեցարուք ասէ տէր, և 'ի

պիղծս մի մերձենայք. զի որ մերձենայ 'ի պոռնիկն մի մարմին է. և որ մերձենայ 'ի տէր՝ մի հոգի է. և ուր հոգի տեառն է՝ անդ ազատութիւն է մեզաց։ Իսկ որովհետեւ զայս ազատութիւն ունիմք, վերակացուք իմ և սիրելիք, ո՞ որոշեսցէ զիս 'ի նմանէ՝ որ փրկեալոցն է զիս 'ի հրոյն յաւիտենից, և 'ի հաղորդութենէ ուրացողին։ Եւ ինձ լիցի ամենայն սրբութեամբ և արդարութեամբ պաշտել զԱստուած կենդանի, և զամենայն վտանգս ընդունել և ըզչարչարանս զոր ածելոց է 'ի վերայ իմ ուրացեալն յԱստուծոյ։

Ասէ եպիսկոպոսն. Ճշմարիտ են ասացեալքդ 'ի քէն. բայց զայս զմտաւ ածել, եթէ առաւել 'ի բարկութիւն և 'ի նախանձ յուզի, և յարուցանէ չար 'ի վերայ չարի վերակացուաց և ժողովրդոց. բայց յարուցեալ եկեսցես, թերեւս փոքր մի շինչանի բարկութիւն անհոլինին։ Նոյնպէս և եղբայրն բդեշխին աղաչէր. և ամենեցուն ասիպեալ և յոյժ թախանձեալ զերա-

նելին, հաւանէր կամաց նոցա, և ասէր. Արարիչ զկամս ձեր. և ես գիտեմ զի չարչարանս ածելոց է 'ի վերայ իմ։ Եւ դուք գնասջիք յիւրաքանչիւր տեղիս և զիս միայն թողուցուք. և չեմ միայն, զի տէր իմ ընդ իս է յոր յուսացեալն եմ. զի տէր է իմ օգնական և ոչ երկեայց. զի՞նչ արասցէ ինձ չարն։

Եւ յարուցեալ երթայր զհետ նոցա. և մեռեալ յապարանսն՝ ոչ հաւանէր երթալ 'ի սենեակ իւր. այլ 'ի անկան միում արգելոյր զինքն, և կայր յաղօթս առ տէր Աստուած և ասէր. Տէր Աստուած իմ, ես 'ի քեզ յուսացեալ եմ. ողորմեա ինձ ողորմեա, որ օգնականդ ես անօգնականաց և տարակուսելոց վստահութիւն. անյուսից յոյս և սգաւորաց միխիթարութիւն, խռովելոց բերկրանք, նեղելոց ապաւինանք. զրկելոց իրաւունք, և իրաւարար. հիւանդաց առողջութիւն և արտմելոց ուրախութիւն. հալածելոց տեղի, բեկելոց ողջացուցիչ, վանգելոց անդորրութիւն, հալա-

ծելոց աղքատաց մեծութիւն. տա-
ռապելոց տուրք, աշխատելոց հան-
գիստ, չարչարելոց զօրացուցիչ,
կապելոց արձակիչ. որոց հայր,
անտէրոց տէր, 'ի քեզ ապաւինե-
լոց և յուսացելոց։ Տուր ինձ զօրու-
թիւն և ժուժկալութիւն, պնդու-
թիւն՝ 'ի բարկանալ սրտմտութեան
ուրացողին 'ի վերայ իմ յաղգմանէ
չարին, և պահեցից զիս սրբու-
թեամբ և անարատութեամբ, և
Ճշմարիտ հաւատով, որ 'ի Հայր և
յՈրդի և 'ի սուրբ Հոգին. զի գու-
ինքնին գիտես տէր իմ, զի 'ի ման-
կութենէ իմմէ զմեզս ատեցի և ա-
նարգեցի, և զօրէնս քո սիրեցի։
Ցիշեա զծառայսն քո զհարսն իմ,
որոց էս էմ զարմ, որք սիրեցին
զքեզ Ճշմարիտդ Աստուած, և նո-
ցա բարեխօսութեամբ օգնեա ինձ
'ի պատերազմիս որ առաջի կայ. և
ոչ ոք է իմ օգնական, ոչ հայր և ոչ
եղբայր, և ոչ այլ ոք 'ի մերձաւո-
ցաց, որ ընտանեբար հոգացէ
վասն իմ։ Այլ գու տէր Աստուած
իմ, հայր և ուղղիչ. մի թողուր զա-

զախին քո 'ի խնամոց քոց և յոզար-
մուլթենէ. և առաւ ինձ զօրութիւն
կատարել զընթացս իմ ներզա-
լթեամբ նմանել հարցն իմոց. և նո-
ցա մատին և հանդատեանն ժառան-
գորդ եղէց։ Եւ արդ 'ի քեզ եմ
յուսացեալ, որ զսուրբն Հռիփսի-
մէ փրկեցեր 'ի բարկութենէ թա-
գաւորին և զնա յամենի արարեր, և
զնա զանարժան ազախին քո փրկեա
'ի բարկութենէ ուրացողին, զի քո
է յաղթութիւն և յաղթեցից։ Եւ
քեզ փառք այժմ և յաւիտեան-
ամէն։

Եւ կատարեալ զաղօթսն մնայր
անդէն 'ի անկանին զերկս աւուրս
անկերակուր և անըմպելի. և հո-
գեւոր կերակրոքն առլցեալ լինէր,
անդադար սաղմոսերգութեամբ և
աղօթիւք 'ի տուէ և 'ի գիշերի։ Եւ
յերրորդում աւուրն երբեւ յընթ-
ըրեալ մտին, առաքեաց զերգբայրն
իւր զՋՈՖԼԻՆ կոչել յընթրեալս զախ-
կինն. և նա ոչ հաւանէր. և յետ
բազում ազաչանաց և ողբալեան
բանից՝ երթայր լալով և արտաս-

թեամբ։ Եւ ունէր աւետարան մի փոքրիկ, որ նախնոյն իւրոյ էր որբոյն Սահակայ, ընդ իւր ունէր, և նովաւ 'ի ծածուկ զԱստուած աղաչէր. և ոչ եկեր և ոչ արբ 'ի գիւղական ընթրեացն այնոցիկ, այլ լուռ եղեալ արտասուօք 'ի յիշատակս խոստացելոց բարեացն Աստուծոյ, և հոգեւոր վայելմանցն որ 'ի Քրիստոս Յիսուս։ Եւ յարուցեալ գնայր 'ի տեղի իւր։

Եւ բդեաշխն արամաեալ յուզէր 4 բարկութեամբ. և իբրեւ անցին յիւրաքանչիւր տեղիս, առաքեաց գարձեալ կոչեաց զնա առ ինքն. իսկ նա ոչ կամեցաւ գնալ։ Յարուցեալ ինքն երթայր գաղանացեալ և քարշէր զնա ծառայնքն 'ի տեղին. և նա աղաղակէր և ասէր. Տէր Յիսուս օգնեա ինձ։ Եւ հարկանէր զնա բրոք սատիկ յոյժ, և ոչ ոք կարէր չինչուցանել զբարկութիւնն։ Յայնժամ ազգ առնէին եղբօրն. և եկեալ ոչ կարէր ցածուցանել զբարկութիւնն. այլ և զնա արհամարհանօք հալածէր 'ի

բաց. և անաչառ և անողորմ զՀաբուածն սատակացուցանէր, մինչեւ ոչ մնաց 'ի նմա տեղի ողջ 'ի բրածէծն առնելոյ։ Եւ նա կայր իբրեւ զմեռեալ. և բդեաշխն առաւել զայրացեալ նախատէր զԱստուած և զՀարս նորա. և յետ բազում հարուածոցն իբրեւ պակասեցաւ լքաւ, Եւ հրաման անգէն քարշել զԵրանելին 'ի տեղի իւր, և համարեցաւ զնա մեռեալ։ Եւ ընդառաւօտն յարուցեալ երթայր 'ի տեսանել զԵրանելին. իբրեւ եռեւ էթէ կենդանի է, պահապանս կարգեաց մի թողուլ զոք մտանել առ նա յարանց կամ 'ի կանանց, զի նովին չարչարանօք մեռցի։ Եւ կերակուր գալի հաց և ջուր հրամայէր։ Եւ Երանելին ոչինչ զանգիտեալ, այլ գոհանայր զԱստուծոյ, որ վասն անուան նորա արժանի եղեւ չարչարանս ընդունել, և 'ի հաղորդութենէ ուրացողին փրկեցաւ, որպէս և ինքն ցանկայր, և յուսայր այսոցիկ եղելոցս որ 'ի փառս Աստուծոյ կատարեցաւ։ Եւ ինքն գնայր 'ի գործ աշխարհին։

Եւ ապա գայր դրան քահանայն և աղաչէր զպահապանն, զի տեսանիցէ զԵրանեելին. և նա ոչ կարէր կանգնել 'ի սաստիկ յայտմանէն յամենայն մարմնոյն և յարբենէն որ մածեալն էր զնովաւ. և լայր դառնապէս քահանայն։ Եւ ասէր Երանեելի տիկնին. Մի լար 'ի վերայ իմ, զի առանց հանդիսի և ջարջարանաց ոչ արդարանայ առաջի Աստուծոյ ամենայն մարդ. և ոչ շնորհք Փրկչին լքանէ Թողու զոք առանց ողորմութեան, որք յուսան 'ի նա. և այսու ջարջարանօքս սրբեցայ 'ի պիղծ անկողնոց առն ամպարշտի. և ես ուրախ եմ ընդ ջարջարանս՝ որ եհաս ինձ. զի այսու ջարջարանօքս հանդիպեցայց բարի Ժառանգութեան հարցն իմոց որ 'ի Քրիստոս Յիսուս. և գոհութիւն վասն այդր ամենայնի հատուցի և հատուցից նմա հանապազ։ Եւ աղաչէր զԵրանեելին առնուլ կերակուր. և նա թէպէտ և կամէր, այլ ոչ կարէր 'ի սաստիկ հարուածոցն. և սակաւ ինչ ճաշակեալ և կայր յաղօթս ան-

գաղար զախ և զգիշեր , ուր արգե-
լեալն էին զնա . և Ճաշակէր սակաւ
մի 'ի գարի հացէն և 'ի ջրոյն ։

Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ
հասանէր երկիւղ ուստէք . և զոր-
գիս նորա տանէր յամուրս ուրէք
անցուցանել ընդ Կուր գետ . և 'ի
մանկանցն գաւ լինէր 5 և մեծ ուզ
բգեշխին լինէր և աշխարհին ։ Եւ
երանելի տիկինն գոհանայր զԱ-
ստուծոյ ասելով . Թէպէտ ըստ մար-
մնոյ մեռաւ , այլ ըստ հոգւոյ ա-
պրեցաւ յորոգայթից հօր իւրոյ ու-
րացողի . և Քրիստոսի փառք յամե-
նայնի ։ Եւ մարզպանն և նախա-
րարն Վրաց գային առ բգեշխն
մխիթարել զնա վասն մանկանն և
լուծանել զուզն . և նա յղէր առ
տիկինն , զի յարուցեալ երթիցէ 'ի
զնդանէն յապարանսն էպիսկոպո-
սին՝ որ մնա էր յեկեղեցին , և 'ի
սան միում կայցէ պահապանաքն
հանդերձ , մինչեւ մարզպանն և նա-
խարարքն գնասցեն յիւրաքանչիւր
տեղիս ։ Եւ նա խնդութեամբ կա-
տարէր զհրամանն ։ Եւ նորա էր-

թեալ զանձն կրօնաւորական ըզ-
գեսցիս կարգաւորութեամբ հան-
գիստանոյր 6 , առաւել քան զառա-
ւել յօժարութեամբ պահօք և ա-
ղօթիւք , ոչնութեամբ և արտա-
սուօք . և ամենայն լուսաւոր կարգօք
հանգիստանոյր , մինչեւ զարմանալ
ամենեցուն ընդ հանդէս նահա-
տակութեան երանելի կնոջն . Զի
այնպէս էր ցանկորդեալ սատուած-
սիրութեամբն , որ ոչ ինչ մեղկէր
զնա 'ի ճգնութենէն . վասն զի ա-
մենայն բարի գործովք յարդարեալ
էր անձն երանելւոյն . սուրբ , մա-
քուր , անարատ , մեղսատեաց , ար-
դար , ճշմարիտ , ուղիղ , որբատէր ,
խոնարհ , հեզ , հլու , հպատակ ,
ցած , հանդարտ , ողորմած , ող-
քատատէր , հիւրասէր , պահող ,
մաղթող , աւնչող , արտասուասէր ,
աշխատասէր , գործասէր , արդիւ-
նաւոր , ընթերցասէր , լսող . ան-
օխակալ , անենախանձ , անամբարտա-
ւան , անբարկանալի , անընչասէր ,
անփառասէր . այլ սատուածասէր ,
հանձարեղ , խնամառուն , խորհրդա-

կան , իրաւարար , աստուածա-
պաշտ , մեկնեալ յամենայն իրաց
չարաց . արժանի ըստ երկնային
կոչմանն խորհել , և արժանապէս
ըստ աւետարանին Քրիստոսի վա-
րեալ զկեանս իւր :

Եւ եղեւ 'ի գառնալ մեծամե-
ծացն յիւրաքանչիւր տեղիս , յղէր
բդեաշխն առ Երանելի տիկինն ողո-
քական բանիւք , գառնալ յայնպի-
սի կամաց և հաւանել կամաց նո-
րա . և խոստանայր պարգեւս և ա-
ռաւել մեծութիւն և պատիւ քան
զառաջինն : Իսկ նա ոչ առնոյր
յանձն բնակել այլ՝ ընդ ուրացողին
զԱստուած : Եւ զզարդան և զպա-
տուական հանդերձս իւր էառ տա-
նել առ բդեաշխն , և պատասխանի
տուն էր . Զի՞նչ բարժին կայ հաւա-
տացելոյն ընդ անհաւատին . և զի՞նչ
հաղորդութիւն լուսոյ ընդ խաւա-
րի . և զի՞նչ միաբանութիւն տաճա-
րի Աստուծոյ և պոռնկի . որ 'ի
ձեռն չարչարանաց սրբեցայ՝ զոր
ածեր 'ի վերայ իմ 'ի քո բարկու-
թենէն , և յառաջին միաւորու-

թեանցն։ Եւ Քրիստոսի ընծայեցայ. ոչ փառք, ոչ մեծութիւնք, ոչ պատիւք, ոչ 'ի մարդկայնոցս ինքք, փափկութիւնք և հեշտութիւնք. ես չարչարանօք փոխեցայց յաշխարհէ և մեծի թագաւորին մերձ կացեալ, և անտի լուսոյն լցայց. զոր փոքր ինչ զհոսումն ատեն ընդունիմ, շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Այսպէս կացեալ մնացեալ հանդերձ զգուշութեամբ 'ի խորհուրդս արդարութեան, և ոչ նստայց յաթոռ ժանտից։ Զոր ինչ առնելոց ես՝ արա. ես պատրաստեմ մեռանել, քան թէ անցանել զաւանդութեամբ հարցն իմոց։

Եւ տարեալ զկարասին և ըզզարդան, և պատմեցին նմա զոր ինչ ասաց երանելին։ Եւ ամպարիշտն առաւել 'ի բարկութիւն ձգէր, և սպառնայր չարչարանս անցուցանել ընդ երանելի աղախինն Քրիստոսի. և առ ցասմանն ոչ նեղէր. այլ յարուցեալ ինքնին երթայր, և զբազումս 'ի ծառայից ընդ իւր

առեալ՝ դոտանէր զնա յեկեղեցւոջն, և ոչ ներէր. այլ մեծալ հարկանէր զնա բրջք սատակ, և բուռն հարկանէր զհերացն և քաշէր յեկեղեցւոյն 'ի դուրս։ Եւ ոչ ոք խշնէր բուռն հարկանել և թափել 'ի գայլոյն զորոջն Քրիստոսի։ Բայց մի ումն 'ի քահանայիցն. Զի այդպէս անողորմ չարչարես, ասէր։ Եւ նա 'ի վերայ նորա զցասումն հեղոյր, և հարկանէր սատակ յոյժ զնա. և ամենայն ժողովուրդքն զձիչ բարձեալ լային առ հասարակ ալք և կանայք. և նա դիմէր յամենեսեան 'ի հարուածս, որպէս գազան չար և անընդեալ։ Եւ զերանելին քարշէր ընդ երկիրն, ընդ փուշ և ընդ խոչ և ընդ քար. և ապա յապարանսն հրամայէր տանել. և պատառ պատառ լինէր ամենայն մարմին նորա. զի էր գըժնիկ երկիրն, և արիւնն 'ի նմանէ և զերկիրն արեամբ ցուցանէր առատացն 7։

Եւ հասեալ յապարանսն՝ դարձեալ 'ի հարուածսն յաճախէր և

առաւել քան զառաջինն. և երա-
նելի ազախին Քրիստոսի ոչ ինչ
բարբառէր, այլ էա զինքն Աստու-
ծոյ և ժուժկալութեան. և կայր
մեծաւ ուժով, և ոչ ինչ գրեաց
զքարշելն և ոչ զբրածեծ գանիցն.
զի հանգերձիկն որ զանձամբն և ըզ-
գլխոյնն՝ 'ի քարշանացն 'ի բաց զեր-
ծոյր 'ի նմանէ. և մերկ գլխոյնն և
պատառատուն զգեստոյնն պատը-
պարէր զանձնն, և գոհանայր ըզ-
սէառնէ վասն անցեցին անցեալոց։
Եւ ամենարիշան ոչ ամաչէր և ոչ
ողորմէր. այլ յաղագմանէ ջարին
յարուցեալ Իբրեւ զհեզեզատ սաս-
տիկ ողողել գերփել կարծէր զրա-
սաւոր վարս և զարբութիւն երա-
նելւոյն, և ասէր. Օգնեսցէ քեզ
Քրիստոս և ազօթք հարցն քո, յոր
յուսացեալ էս։ Եւ ապայր կապել
զոտս և զձեռս երանելւոյն երկաթի
կապանօք և արկանել 'ի բանդ, և
արկանել շղթայս 'ի պարանոցն, և
վարել հրամայէր երկաթի ցից ընդ-
ումն, և զշղթայսն ընդ այն կապել,
և ինքէր զկապանսն և զշղթայսն։

Եւ պահապանս կարգէր մեծաւ ա-
հիւ և զգուշութեամբ պահել, և
մի զոք ամենեւին թողուլ. և կերա-
կուր նորա գարի հաց և ջուր հրա-
մայէր։ Եւ ասէր. Արդ ուրախ լեր
որում հանդիպեցար չարչարա-
նացդ և դառն կապանացդ, որով
կատեմ զքեզ մինչ 'ի մահ։ Եւ
պատասխանէ տիկինն և ասէ. Ու-
րախ եմ ընդ այն չարչարանս զոր
ածեր 'ի վերայ իմ. զի արժանաւո-
րեցայց ժառանգութեան սուրբ
հարցն իմոց, զոր նախատես զնոսա
և զԱստուած, օտարացեալդ յԱ-
ստուծոյ և թշնամի արդարութեան.
զի ոչքան յաւելուս զտանջանս ինձ՝
առաւելուս ինձ զուրախութիւն որ
ոչ անցանէ. զի առժամեան նեղու-
թիւնքս զմեծութիւն առաւելու-
թեան փառացն պատրաստէ ինձ,
որ ոչն սասանի յաւիտեան. և դու
ընկալցիս վրէժս յարդար դատաս-
տանացն Աստուծոյ յաւուրն այցե-
լութեան։

Եւ ամպարիշտն ոչ ինչ պատաս-
խանի առնէր, այլ զարմանայր ընդ

ժուժկալութիւն և ընդ համբերութիւն երանելի տիկնոջն . և թողեալ նովին կապանքն գնայր յաշխարհն : Եւ յետ երից աւուրց գայր դրան քահանայն , և տայր ինչս պահապանացն , և մտանէր առ երանելի տիկինն , և տեսանէր զնա կապանքն լի ուրախութեամբ և զուարթութեամբ յանդգնագար սաղմոսերգութեան , և համբուրէր ըզկապանս երանելւոյն , և երանէր զնա , որ զայնպիսի համբերութիւն վասն Աստուծոյ կրեաց 8 . և ասէր . Երանելի՛ ես դու 'ի կանայս . արդարեւ բարի արմատոյ բարի շառաւեղ ցուցար . յայսմ հետէ երանիցեն քեզ հաւատացեալք արդարապէս բանիւ . զի յուսով Աստուծոյ վանեցեր զամպարիշան , և զանուն և զոգի ժառանգեցեր ըստ նմանութեան սրբոյն Հռիփսիմեայ , ընդ նմին և պատկիս յամենեցունց տեսանէն : Ասէ երանելի տիկինն . Ես ոչ եմ արժանի երանութեանց և ոչ պատկաց և ուրախութեանց սրբոցն , որ ոչ մերձեցան 'ի յայր

ամպարիշտ. իսկ ես բնակեալ ընդ
առն ամպարշտի և ծնայ որդիս յա-
պականութիւն և 'ի կորուստ 'ի
ձեռն ամպարշտի. թէպէտ 'ի շնոր-
հաց աւազանին ծնան վերստին, և
ես արդարութեամբ մնուցի և յու-
սացայ՝ Աստուծոյ մերձաւորս առ-
նել խրատու և խմաստութեամբ
սեառն. բայց ոչ են արժանի՝ սերմն
ժանգի՝ բոյս բարի լինել։ Բայց մի
ինչ է, որ 'ի ձեռն ջարչարանաց և
երկաթի կապանաց արբեցայ 'ի մեր-
ձաւորութենէ ուրացողին. և այս
յայտ եղեւ ամենեցուն, եթէ 'ի
ձեռս իմ էր զերծանել 'ի տանջա-
նաց և 'ի կապանաց, որով կատէն
զիս։ Եւ արդ ես ոչ անյոյս լինիմ
'ի վատահացեալն. քանզի զմի-
կուն իմ եառ 'ի հարուածս, և
զծնօտս իմ յապտակս, և զերեսս
իմ ոչ դարձուցի յամօթոյ. և սէր
իմ եղիցի իմ օգնական, և ես ոչ
երկեայց. զի՞նչ արասցէ ինձ մարդ։
Այսպէս փոխեցայց հանդերձ ըզ-
գուշութեամբ և կատարեալ կրօ-
նիւք և կարգաւք, որչափ է շունչ 'ի

մարմնի խմռում. զի Թերեւս հաղորդեցայց սրբոյն դասուցն։ Եւ յոյժ ուրախ եղեալ ընդ սուրբ տիկնոջն համբերութիւնն, դառնայր քահանայն 'ի վանս իւր, և արբանեկէր կապանացն 'ի ծածուկ օր ըստ օրէ։

Եւ բդեաշխն հեռանայր 'ի կողմանս ճորայ, և եղբայրն բդեշխին ոչ էր 'ի սահմանսն՝ յորժամ երկրորդ ջարչարանքն և կապանքն գժնդակք հասանէր սրբոյն. և լուեալ յոյժ տրտմէր, և երթեալ աղաչէր լուծանել զկապանսն. և բազում աւուրք անցանէին, և հազիւ ածէր 'ի հասան՝ միայն զշղթայսն լուծանել 'ի պարանոցէն. այլ վասն ոտիցն երդումն արարեալ ոչ լուծանել մինչեւ ցօր մահուան իւրոյ։ Եւ այնպէս նովին կապանօք և տառապանօք, սովով և ծարաւով և նեղութեամբ զվեց ամս բանդին կատարէր. և զվեց ամն ոչ դադարէր 'ի պնդութենէ կրօնիցն, յորս հանդիսանայր և ճգնէր պահօք և աղօթիւք, պինութեամբ և արտասուօք, անդադար սաղմոսերգութեամբ ըզ

ցայգ և զգերեկ , հարուածեալ անձամբ և գառն կապանեալ . գարի հացիւ և ջրով շաղացեալ . և զպահպարծոյ զաղկին զչաքաթան ոչ ինչ ճաշակեալ , բայց 'ի շաքաթու և 'ի կիւրակէի ճաշակէր 'ի մարմնոյ և յարենէ կենդարարին . և սակաւ ինչ բանջար ճաշակէր :

Եւ 'ի համբաւ առաքինութեան նորա գային սեսանել բազումք ազգ և կանայք և ուխտաւորք աշխարհականք . լսէին 'ի նմանէ զվարս պարկեշտութեան և արդարութեան : Եւ յորդորէր զբազումս թողուլ զաշխարհս և որ ինչ յաշխարհի , և երթալ զհետ անանց կենացն : Եւ բազում տարակուսելոց 'ի ձեռն աղօթից նորա առնէր այցելութիւն Աստուած . անորդեաց՝ որդիս , զիւանդարաց բժշկութիւն , ախտաժետաց առողջութիւն , և ամենայն վշտացելոց մխիթարութիւն . և իւրաքանչիւր ըստ անձին իւրում յԱստուծոյ խնդրոցն պարգեւս բարեաց շնորհէր սուրբ աղօթիւքն իւրովք : Եւ ամենայն ոք որ գայր

առ նա , լիութեամբ գառնայր
և ուրախութեամբ . և փառաւոր
լինէր նովաւ անուն տէառն , ուր և
լսելի լինէր համբաւ սրբոյն : Ապա
որոյ և կին մի պարսիկ 'ի մոգացն
անուանի , բորոտ էր , և ոչ ինչ
գտեալ էր բժշկութիւն 'ի բժշկաց ,
և 'ի համբաւ սրբոյն գայր և առաջի
անկանէր տուրբ տիկնոջն և հայցէր
զբժշկութիւն . և երանելին ասէր .
Եթէ հաւատաս յԱստուած Աշխա-
րիս և Թողուս զօրէնս պարսկաց ,
խնդրեմ՝ ազօթիւք 'ի տէառնէ և
առցես զբժշկութիւն . և ծանիցես
զմեծ զօրութիւն Աստուծոյ իմոյ :
Ասէ կինն պարսիկ . հաւատամ՝
յԱստուած քրիստոսէական . և հրա-
մայեաց մկրտել զնա . և առժա-
մայն սրբեցաւ բորոտութիւնն . և
տայր փառս Աստուծոյ և օրհնէր
զԱստուած , և խոստովանէր զամե-
նասուրբ զԵրրորդութիւնն , և 'ի
բաց կայր 'ի Պարսից օրինացն , և ըն-
դելանայր Աստուծոյ , որով բժըշ-
կութիւն եգիտ . զոր և ինքն խակ
պատմէր մոգուց և մոգպետաց :

Եւ լուեալ զայս ամենայն ը-
գեաշին զարմանայր։ Եւ յետ ջո-
ւրից ամաց գառնայր 'ի հեռաւոր
Ճանապարհէն, և գայր ուր տիկին
էր. և վաղվաղակի մեծամեծ հա-
ղուածովք և տանջանօք նեղէր ը-
սուրբն. բարկանայր և պահապա-
նացն, ասէր. Ո՞չ պատուիրեցի ձեզ
զգոյշ լինել մի զոք թողուլ առնա-
մատուցանէր և նոցա գան մահու.
և զերանելին առաւել եւս հրա-
մայէր նեղել 'ի կապանս բանդին։
Եւ յետ այսր ամենայնի ոչ կարաց
կամաց իւրոց հատանել ամպարիշան
զոր կարծէր. 'ի հնարս մատնէր,
գտանէր կին մի կախարդ, և նովաւ
ջանայր լուծանել 'ի գեղեցիկ կրո-
նիցն։ Եւ կինն յանձն առնոյր. և
տարի մի մարտեաւ ընդ նմա այն-
պիսի գիւական ցնորիւք բգեաշին,
և ոչ ինչ կարաց առնել. այլ առա-
ւել տեսանէր 'ի հանդէս Աստուծոյ
կամացն։ Եւ յայնմ եւս յամսի
լեալ և ոչ գառնայր 'ի նանիր խոր-
հրդոյն. թէպէտ և որպէս մենք-
նայ յամուր պարսպէ՝ 'ի բաց գառ-

նայր յառաքինեւոյն։ Նա և զորդիսն ուրացուցանէր և շնորհուկս առնէր Թագաւորին Պարսից, զի առաւել պատիւ ընկալցի յարքայէն։ Ծանուցանէր և զսիկնոջն եթէ գուսորը Վարդանայ է, որ ընդդիմացաւ արքային Պարսից, և վասն այսր օրինաց կոտեմ և տանջեմ զնա մինչեւ ցմահ. զի ոչ հաւանեցաւ պաշտել զաստուածս արքայի, որպէս զհայր իւր աշխարհաւեր։

Բայց զինչ եւս պարտ է ասել զնորայսն զչարաբարոյութիւնսն, որ յամենայնի կատարեաց զմեզս. զի զվեց ամն թէպէտ և բազում ջանայց, ոչ ինչ կարաց յաղթել վասն յուսոյն Քրիստոսի։ Եւ էր հանդերձ նորա 'ի մերկուց քուրձ. և 'ի վերոյ պարեգօտք անտիոքացի 9, և բարձիկ փոքրիկ մաշկէ 'ի անարս, և աղօթանոց փոքրիկ, և բոկոտն եւս. և կերակուր գարի հաց, և ըմպելի ջուր։ Եւ յամենայն բարի կարգս յառաջադէմ։

Եւ 'ի մտանել եւթներորդ ամին հարուածոցն և կապանացն և բան-

գին. հիւանդանոցը երանելին յան-
հրնարին տանջանաց վասն սասակ
Ճգնութեանն զոր կրեաց յանօրի-
նէն։ Եւ գայր եղբայր բդեշխին
Ջոջիկն և երկրպագէր սուրբ նշա-
նին որ առաջի տիկնոջն 10. և ա-
ռաջի անկանէր սուրբ աղախնոյն
Քրիստոսի հանդերձ կնաւ իւրով
զի օրհնեացին 'ի նմանէն. խոսաս-
վանէր և զմեզս իւր բազում ողբ-
ովք և արտասուօք. և ընդունէր
'ի նմանէ խրատ բազում յորդորա-
կան բանիւք հեռանալ յառաջին
չարեացն և առեալ զչարը, և սիրել
զբարին և զարդարութիւն։ Եւ յու-
զարկեաց զնա 'ի տեղի իւր։

Գայր և գլուխ եպիսկոպոսացն
Սամուէլ, և Յովհան եպիսկոպոս
հանդերձ քահանայիւք և սարկա-
ւագաք, որ էին քաջալերիչք և
կցորդք նեղութեան երանելւոյն,
զի յղարկեացեն զնա 'ի մեծ աշխա-
տութենէն 'ի Նաւահանգիստն
Քրիստոս. նոյնպէս և նախարարք
և ազատք և տիկնայք, և այլ ա-
պուհք աշխարհին Վրաց, զի հա-

զորդեացին յղարկման օրհնութեան
երանելւոյն։ Եւ խնդրէին ամենե-
քեան զերկաթի կապանան՝ նշխարս,
'ի յիշատակ որբոյն։ Իսկ նա ասէ.
Ես ոչ եմ այդմ արժանի. բայց
կամք Աստուծոյ եղիցին, արարէք
որպէս և կամիք։ Եւ օրհնեաց զա-
մենեսեան և ասէր. Ամենալին
Քրիստոս լի արասցէ զձեզ հոգե-
ւոր օրհնութեամբ։ Եւ գոհանայր
զսանէ եպիսկոպոսին որպէս զդայ-
եկէ կամ զհօրէ։ Եւ այսպէս հրա-
ժարեալ յամենեցունց և օրհնեալ
զամենեսեան 'ի Քրիստոս, ազաչէր
գնալ յայնմ տեղւոջ, ուստի զա-
ռաջինն քարշեցին, եթէ արժա-
նի 11 զայն առնել։

Եւ այսպէս հրաժարեալ յամե-
նեցունց և օրհնեալ զամենեսեան 'ի
Քրիստոս, գոհութիւն յաղթու-
թեան ամենասուրբ Երրորդու-
թեանն 'ի բարձունս վերառաքէր
հանդերձ ամենայն ժողովրդոքն, և
աղօթէր գոհանալով այսպէս. Գո-
հանամ զքէն Քրիստոս, որ արժա-
նի արարեր զիմ անարժանութիւնս

կատարել 'ի հաճոյս քոյոյ տէրու-
թեանդ . և այժմ պահեա զՀաւա-
տացեալս ընդ ամենազօր աջովդ
քո . և զնմ զբարբարանս՝ ընկալ 'ի
հաճոյս քեզ , բարեխօսութեամբ
հարցն իմոց սիրոզաց անուան քո ,
զի յամենայնի փառաւորեսցի ա-
նուն քո սուրբ , և ես 'ի շնորհս քո
աւանդեմ զՀոգի իմ : Եւ զայս ա-
սացեալ սրբոյն աւանդեաց զՀոգին
'ի փառս Աստուծոյ : Եւ ամենե-
ցուն յարտասուս եղեալ լային մե-
ծաւ երկիւղիւ , և տային օրհնու-
թիւն Աստուծոյ :

Եւ եպիսկոպոսն և ամենայն ժո-
ղովուրդքն ամփոփեալ զմարմինն և
լուացեալ 'ի ձեռն պարկեշտ կա-
նանց , և իւղովք անուշիւք և խըն-
կովք զպէտսն բերեալ , և պատեալ
սուրբ կտաւոք՝ եդին 'ի տեղւոջն
յորում պատուիրեաց : Եւ զգի-
շերն ամենայն օրհնութիւն Աստու-
ծոյ մատուցին մինչեւ 'ի ժամ ճա-
շոյն . և ապա պատարագ մատու-
ցանէին և ոչն մեծ կատարէին զոր
հանգստեան սրբոյն 'ի տան և եւթն

քաղցց ամենոյ, ամ՛ յամէ կատարե-
լով՝ ի փառս Աստուծոյ։ Եւ ոչ
սակաւ բժշկութիւն առնէր Աս-
տուած բարեխօսութեամբ սուրբ
միկնոջն։

Այս է հանդէս նահատակու-
թեան սրբոյն Շուշանիկանն։ Այս-
պէս Աստուծոյ ընծայեցաւ, և այս-
պէս Քրիստոսի մերձաւոր լինի և
հոգւոյն սրբոյ ընդեալ և ընտանի. ՝ի
փառս ամենասուրբ Երրորդու-
թեանն, յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ՇՈՒՇԱՆԿԱՅ

ՈՐ Ի ՎԻՐՍ ԿԱՏԱՐԵՑԱՒ

ՅԱՌՆԷ ԻՒՐՄԷ

ՅԱՆԹԻՊԱՏՐԵԱՅ

ՎՐԱՑ ԱՌԱՔՆՈՐԴԷ

Սուրբդ ոմանք երեւեալք՝ առաջինք ի նախարարացն վերապետաքն աշխարհին Հայոց, լուսաւորութեան պատճառաքն, որպէսզի նորոգեսցեն իջեալ ցմեծն առաքն Սահակ, որպէս մեծին Ներսէսի, որպէս Ամենապնի, որպէս Յուսիկանն, որպէս Վրթանայ, որպէսզի ոչ ոչ Գրիգորի։ Սա առաքինութեամբ ամենայն հարցն նմանեալ և

աղօթից մասամբ առաւելեաց
Քանզի սատանայ աշակերտս վաթ-
սուն արս կրօնաւորս բռկագնաց
խարազնապզեաց , որք յար ընդ
նմա շրջէին . որովք զմշտնջենաւոր
պաշտօնն և զկատարն հանապազ կա-
տարէր , որպէս զայն որ յանա-
պատան՝ երանելին սուրբն Սահակ,
եւս առաւելագոյր : Եւ 'ի սա հասեալ
դադարումն եղեւ ուսուցեալ նորա.
բայց ունէր գուսան մի Սահակա-
նոյշ կոչեցեալ, որ տուաւ յամուս-
նութիւն Համազասպայ Մամիկո-
նեից 12 . և 'ի նմանէ սուրբն Վար-
դան , և 'ի Վարդանայ՝ սուրբն Շու-
շանիկ , որ տուաւ կին Ներսիսա-
պարեայ Վրաց առաջնորդի : Որ յա-
ղագս մարդկան երկեւղն , մանա-
ւանդ թէ 'ի կամաց, վասն դատերն
իւրոյ եմուտ ընդ զրադաշտական
օրինաց մոգութեան : Որում ոչ
հաւանեալ երանելւոյն Շուշան-
կանն յանդիմանէր զնա և առաջի
արկանէր զԱստուծոյ արդար դա-
տաստանն որ 'ի վերայ այնոցիկ՝ որ
զայնպիսիսն գործեն : Որում ոչ հա-

ւանեալ, այլ առաւել բորբոքէր 'ի բարկութիւն յաղագս յանդիմանութեանն և անհաւանութեան անկողնոյն։ Եւ բազում չարչարանօք նեղէր զերանելին Շուշանիկ բանիւք և հարուածովք, սովով և ծարաւով և ազգի ազգի տանջանօք և կատանօք ամս վեց նեղէր զնա, որով կոտեաց զերանելին ամբարիշան և օտարացեալն յԱստուծոյ և յամենայն ակնկալութենէ յուսոյն կենաց որ պահի յուսացելոցս 'ի Քրիստոս։ Եւ նա բազում համբերութեամբ ընդունէր 'ի փառս Աստուծոյ, զոր ոչ է կարող բերան պատմել զերանելւոյն Շուշանիկանն՝ զտարեաց կամ զամսոց կամ զշաբաթուց կամ զաւուրց կամ զժամուց չարչարանս, զոր կրեաց յառնէն իւրմէ վասն անուանն տեառն։ Իսկ իբրեւ եհաս ժամ կատարման և հանգստեան և փոխման 'ի Քրիստոս առ որ անձկայեալն էր, առաքէր և կոչէր զդլխաւոր եպիսկոպոսացն զԱմոնէլ և զՅոհանն նորին ընկերն՝ որ քաջալերիչն և

մեծավաստակք հանդերձ ընտա-
նեօքն՝ լեալ էին. որք եկեալք և
մասնաւորեալ օրհնութեամբ յու-
զարկէին առ նաւահանգիստն Քրիս-
տոս որ հանգուցանէ զաշխատեալսն։
Ըստ նմին օրինակի նախարարքք և
սեպուհք, տիկնայք, ազատք և ա-
նազատք աշխարհին Վրաց նոյնպէս
մասնաւորեալք երանութեամբք որ-
պէս զքաջ նահատակ և խոստովա-
նող Քրիստոսի աւանդէին և փա-
ռաւորէին զԱստուած։ Եւ խնդիր
'ի մէջ առեալ ամենեցունց եպիսկո-
պոսացն և զօրավարացն զի զկապան
ոսկեցն յօրհնութիւն առցեն. զոր
տիկնոջն ծանուցեալ պատասխանի
առնէ, թէ Ես անարժան եմ այդմ
ամենայնի, բայց ըստ աստուածսի-
րութեան ձեր եղիցի որպէս և կա-
միք, և ես զինչ բերեմ 'ի համար
զնմ նեղութիւնս զոր կրեցի. այլ
որ տէրն է և յոյսն իմ Քրիստոս
Աստուած ընկալցի զիս, և զձեզ զա-
մենեսեան օրհնեսցէ և հատուսցէ
պարգեւս բարեաց ըստ իւրաքան-
չիւր վաստակոց։ Եւ հրամայէր

ընչևաբս ոսկերացն դնել 'ի տեղ-
ւոջն՝ ուստի զառաջինն քարշեցին՝
եթէ ցեմ արժանի, ասէ, այդմ ա-
մենայնի։ Եւ հրաժարեալ յամե-
նեցունց արտասուօք փառաբանու-
թիւն յաղթութեան Աստուծոյ մա-
տուցանէր. Փառք քեզ Աստուած,
փառք քեզ ամենասուրբ Երրորդու-
թիւն, որ օրհնեալ ես յամենայն
արարածոց յերեւելեաց և յանե-
րեւութից. ընկալ զիս բարերարու-
թեամբ քո ընդ փառաբանիչս ա-
նուան քո սրբոյ 'ի կեանդ յաւի-
տենից, զի հաւասարեցից և ես
հարցն իմոց սրբոց որք սիրեցին զք-
քեզ և հաճոյ եղեն տէրութեան
քում, որոց փառաւորեալ են մահք
իւրեանց առաջի աստուածութեան
քում։ Քրիստոս յոյս և ապաւէն,
որ զօրացուցեր զիս յամենայն նե-
ղութիւնս և 'ի չարչարանս համբե-
րել վասն անուանդ քո և հաստա-
տուն պահեցեր զյոյսն որ 'ի քեզ,
տուր ինձ մասն և բաժին ընդ սիրե-
լիս քո յանանց և յանվախճան
կեանդ, զի քո է տէրութիւն և

իշխանութիւն և փառք յաւիտեանս
յաւիտենից : Եւ ասացեալ ամենե-
ցուն զամէնն, աւանդեաց զՀոգին
Երանելին սուրբն Ղուշանիկ բարի
խոստովանութեամբ 'ի Քրիստոս, և
ամենեքեան փառս մատուցանէին
Աստուծոյ, որ ետ զայնպիսի համ-
բերութիւն Երանելւոյն :

Եւ անդէն վաղվաղակի բերին
կտաւս բարակս և լուացեալ զմար-
մին սրբոյն յորդանանն և 'ի Թարա-
խոյն զոր ունէր 'ի բանտէն և 'ի
ջարչարանացն : Եւ եպիսկոպոսացն
երկոցունց առեալ զմարմին սրբոյն՝
պատեալ և խնկեալ՝ բերին 'ի սուրբ
եկեղեցին հանդերձ սուրբ քահա-
նայիւք և սարկաւագօք և ժողովրդ-
աղմոսիւք և երգօք հոգեւորօք,
մոմեղինօք լուցելովք և անուշահոտ
խնկօք, և ամփոփէին 'ի պատրաս-
տեալ հանգիստ փառաւորապէս :
Եւ Երանելի եպիսկոպոսունքն Սա-
մուէլ և Յոհան ամենայն ժողովուրդ-
ովքն զգիշերն ամենայն հանդերձ
բազմութիւն օրհնէին զԱստուած,
հրեշտակական օրհնութեամբ և

դաւթեան սաղմոսերգութեամբ, և այսպէս գոհութեամբ փառաւորէին զամենայաղթն Աստուած, որ տայ յաղթութիւն սիրողաց իւրոց և ամենայնից արարեալ դատապարտէ զընդդիմադարձս և զամպարշտեալս։

Եւ կատարեցաւ երանելին սուրբն Ղուշանիկ որ օր տասն և եւթն էր քաղաց ամսոյ գովութեամբ 'ի գովութիւն յուղարկեալ 'ի Քրիստոս Յիսուս տէր մեր։ Եւ օրինադրեցին զօր յիշատակի նորա տօնախմբելով բազմամբոխ ժողովրդովք ամ յամէ, փառաւորելով զամենասուրբ զԵրրորդութիւնն։

Է և այլ պատմութիւն 13 սրբոյն Ղուշանկանն, որ Վարդանի անուանեալ 'ի հօրէն իւրմէ սրբոյն Վարդանայ, որ զկարգ բանիցն մանրամասնաբար ցուցանէ զվեց ամացն չարչարանաց և զմառախղաւ ծածկիլն ուրացելոյն Վազգենայ, և ըզքսան և չորս ժամու զաղօթսն անխափան և զբազում զաղգի ազգի նեղութիւնսն որ կրեաց, զոր թէ խնդրես 'ի մարտիրոսդքն 14, դատնես և առնուս զխնդրելին։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1 · Պարտ է ընթեռնուլ Անթիպատոս կամ Անթիհիւպատոս, որ է փոխանակ հիւպատի ըստ յունին, զոր ստորեւ Բդեաշխ թարգմանէ ըստ հայումս։

2 · Այսինքն է Կրակի, զի ստրուշանն՝ կրակարանն է հրոյն պաշտեցելոյ։

3 · Յօր · Վարդէ։

4 · Յօր · յուլի։

5 · Ցուցանէ պատմութիւնս, թէ յահէ ասպատակի թշնամեաց՝ Վազգէն տայր տանել զորդիս իւր յամուրս վայրաց, յայնկոյս Կուր գետոյ, և յանցանելն ընդ այն՝ մի 'ի նոցանէ գետավէժ կորնչի։

6 · Այսպէս յօր · բայց պահանջի այլ բայ։

7 · Պակասեն բառք ինչ, զոր ոչ
իշխեցաք մեզէն ընուլ։
8 · Ի լուսանցսն գրի՝ Կրէր։
9 · Պարեգօսն անտիոքացի ոչ գի-
տեմ որպիսի ինչ նիւթ էր, կամ
զի՞նչ ձեւ։
10 · Նշանս այս այլ նշան է և
ոչ խաչն հրաշագործ Նուռնեայ
Վրաց առաքելուհւոյ, զոր կան-
գնեացն 'ի Մծխիթայ, և ուխտա-
տեղն մեծ եղեւ Վրաց և Հայոց.
իսկ տիկնոջս Վրաց հոգացեալ
զերծուցանել զխաչն 'ի նախա-
տանաց առնն ուրացելոյ և ճար-
տարութեամբ 'ի ձեռն ածեալ
և առաքեալ էր 'ի Հայս, որպէս
պատմի 'ի Յայտնաւորս, յ'արե-
գի ամսոյ ԻԲ. այսպէս ունելով
բանին . . . "Եւ նա ինքն սուրբն
" Շուշան՝ յուրացուութեան առն
" իւրոյ Ջանայ զսուրբ խաչն Նու-
" նեայ Վրաց առաջնորդի՝ յղել
" 'ի բուն գաւառն իւր 'ի Տա-
" րոն։ Եւ եկեալ առ նա աբե-
" զայ մի Անգրէաս անուն 'ի Ղա-
" զարու վանացն՝ որ է Ս. Առա-

՝՝ քեալքն Մշոյ . և սուրբն Շու-
՝՝ շան օգնականութեամբ տայ-
՝՝ գերն իւրոյ Ջոջկայ , եւ ըզ-
՝՝ սուրբ խաչն յԱնգրեէաս աբե-
՝՝ զայն , տանել 'ի սուրբ Առա-
՝՝ քեալքն 'ի Ղազարու վանան ։
՝՝ Եւ էր Անգրեէասն այն յաշա-
՝՝ կերտաց սրբոյն Սահակայ պա-
՝՝ պուն Շուշանայ ։ Եւ նա ա-
՝՝ ռեալ զսուրբ խաչն և այլ բա-
՝՝ զում սուրբ նշանս խաչերոյ
՝՝ և զսպասք սուրբ եկեղեցեացն
՝՝ Մծբնայ , և յուզի անկեալ
՝՝ եկն եհաս 'ի Սպեր գաւառ . և
՝՝ այլ ոչ կարաց գնալ 'ի շրջոթ-
՝՝ մանէ և 'ի վերդվմանց ճանա-
՝՝ պարհին , այլ անդ եկաց գա-
՝՝ գարեաց ամս եւթն 'ի խորշ
՝՝ մի լերինն Սպերոյ , մինչեւ
՝՝ լուաւ զբարի կատարումն Շու-
՝՝ շանայ ՝՝ ։ Ապա ազգ արարեալ
Գրիգորոյ Մամիկոնոյ եղբօրորդւոյ Ս . Վարդանայ , առնու թա-
փէ սա զխաչն և հանգուցանէ 'ի
բերդն Կապուտայ յԵրասխաձոր,
յորմէ փոխի 'ի Վանանդ 'ի Խաչի

վանս, և յետ 459 ամաց 'ի Կարս քաղաք, և անտի յետ 164 ամաց յԱնի, ուր կայ 142 ամ մինչեւ ցառու�քաղաքին 'ի Թաթարաց յամի տեառն 1239, և յետ այնորիկ անյայտ լինի։ Ըստ այսմ հաշուի՝ նահատակութիւն Ղուշանիկան երեւի հանդիպեալ յամի տեառն 474 կամ 476։

11. Պակասի բայն համարին։

12. Յայս վայր առեալ է 'ի բանից Խորենեցւոյն 'ի ԾԱ և 'ի ԽԹ գլխոց Գ գրոց պատմութեանն Հայոց. իսկ զոր յետ այսր՝ 'ի նախակարգեալ պատմութենէ սրբոյն համառօտեալ. բայց զի զկնի ասէ թէ ելցէ և այլ պատմութիւն վարուց սրբոյն՝ թուի որիշ յայսմանէ. քանզի ոչ յիշին 'ի սմա գէպք մաւախլապատն լինելոյ Վազգենի, և ոչ երկարաձիգ աղօթքն 24 ժամուց. նա և ոչ իսկ հակիրճքն՝ որ ասա գտանին ասացեալ մերձ յաւանդման հոգւոյ երանելւոյն։ Իսկ Մարտիրոսքն յորում գտանէին վարքն

այն՝ վկայաբանութեանց գիրքն էր՝ 'ի յոյն անուանէն Մարտիրոլոգիոն։ Իսկ 'ի Յայտնութիւնս 'ի հակիրճ յիշատակի անդ վարուց սուրբ տիկնոջս, ասի և այս. „Յաւուր միում լախտով հարկանէր Վազդէն զսուրբն Շուշան, և կամէր սպանանել զնա. „իսկ Ջոջիկ տայգրն Շուշանայ „եղբայրն Վազդենայ անիծեալ, „թափեաց զնա յեղբօրէն „իւրմէ և տարեալ ընկէց կիսա„մահ „։

13. 14. տես 'ի վերս, 12։